ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄՈՒՄ

«Թույլ տվեք այդ մանուկներին գալ ինձ մոտ և արգելք մի՛ եղեք նրանց, որովհետև Աստծու արքայությունը այդպիսիներինն է»:

(ՄԱՐԿ. Ժ 13-16)

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախատեսած հավաքական մկրտություններն Արագածոտնի թեմում սկսվեցին հունիսի 19-ին: Օշականի առաջնորդանիստ եկեղեցում առաջինը իրենց մկրտությունը ստացան շուրջ 24 մանկիկներ, որոնք այսուհետ կկրեն Սրբալույս Մյուռոնի դրոշմը:

Աշխարհ գալու գեղեցիկ սկիզբը, որ ազդարարվում է մանկան ճիչով, իր մեջ մեծ խորհուրդներ ունի: Այդպիսի մի մեծագույն խորհուրդ է հոգևոր ծնունդը, որ մկրտություն է կոչվում, և որի օրինակը տվել է Ինքը Քրիստոսը՝ մկրտվելով Հորդանան գետում:

Քրիստոսի մկրտությունը մահկանացուին պարտավորեցնում է սրբազան երկյուղով մոտենալ այդ վեհ խորհրդին:

Եվ առ Աստված այդ երկյուղն ու սերն էր առաջնորդել բազմաթիվ ծնողների Մաշտոցաշունչ եկեղեցի, ուր, նախագահությամբ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, կատարվեց երեխաների մկրտության սուրբ արարողությունը:

Թեմում, առաջնորդական տեղապահ, Հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի նախագահությամբ, մկրտությունները շարունակվեցին:

Հունիսի 20-ին՝ Թալինում, Սուրբ Աստվածածին եկեղեցում: Այստեղ ևս 75 հրեշտակաղեմ մանուկներ որդեգրվեցին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կամարներից ներս: Մկրտության սուրբ արարողությանը Թալինում իր մասնակցությունն էր բերել Մայր Աթոռի միաբան Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանը:

Մկրտության արարողությունից անմիջապես հետո եկեղեցու շրջափակում թընդացին ազգային երգն ու պարը: Հանդես եկավ Թալինի երգի-պարի համույթը, որն Էլ ավելի ամբողջացրեց մասնակիցների ուրախությունը՝ արարողությունը վերածելով մի գեղեցիկ ազգային տոնի:

Այնուհետև արարողության մասնակիցները, Թալինի հոգևոր հովիվ, Արժանապատիվ Տ. Եղիշե քահանայի առաջնորդությամբ, հրավիրվեցին քաղաքային մշակույթի տուն՝ մասնակցելու միասնական սիրո ճաշի: Այստեղ ևս շարունակվեց տոնական տրամադրությունը: Հոգևոր դասի կողմից երգված «Էջ Միածինն ի Հօրէ», «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի» շարականները նոր շունչ ու ոգի տվեցին մասնակիցներին: